ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« --- » ապրիլի 2014թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 504-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012թվականի սեպտեմբերի 11-ի «Երևան քաղաքում տոնավաճառներ կազմակերպելու մասին» N504-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 3-րդ կետի դ) ենթակետում «հայտերի ներկայացման և թույլտվության ստացման կարգը» բառերը հանել.
2) Կարգի 10-րդ և 13-րդ կետերում «ապրանքի» բառից հետո լրացնել «տեսակի» բառը.
3) Կարգի 11-րդ կետում «Դիմումատուին» բառից հետո լրացնել «անվճար» բառը.
4) Կարգի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
   «12. Տոնավաճառին մասնակցելու համար անհատ ձեռնակատերերը, կազմակերպությունները և ֆիզիկական անձինք Երևանի քաղաքապետարան կարող են դիմել նաև էլ. փոստի միջոցով և հեռախոսակապով: Հեռախոսով տոնավաճառին մասնակցելու հայտ ներկայացրած սույն կետում նշված անձինք, ընդգրկվում են համապատասխան ցուցակներում, որոնք տրամադրվում են կազմակերպչի ներկայացուցչին».
5) Կարգի 20-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N 504-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N504-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքում տոնավաճառ կազմակերպելու կարգը (այսուհետ՝ Կարգ), որով սահմանվում է տոնավաճառների կազմակերպման պայմանները, դրանց մասնակցելու թույլտվության ստանալու ընթացակարգը և այլն։

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը Կարգով սահմանված ձևակերպումների հստակեցման և պարզեցման վերաբերյալ Երևանի քաղաքապետարանին ներկայացրել էր առաջարկություններ, որոնց քննարկման արդյունքում Կարգը լրամշակվել է։

Որոշման նախագծի ընդունմամբ առավել կդյուրացվի տոնավաճառներին մասնակցելու կարգավորումները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N504-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N 504-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N504-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N 504-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ